

միայն վճարել զպարտքն : Այլ ապա սկսան  
 յորդորել զմիմիանս եւ առատաձեռնել տուրս  
 յոլովս եւ զուարթս , ընչաւէտ եւ փարթամս .  
 եւ էր ամենայնի գլուխ եւ էրէցփոխան Ենկի-  
 խոճայն : Եւ սկսան ամենեքեան տալ ըստ չա- 65  
 փու եւ կարողութեան փառաւոր եւ անվանի  
 տօլվաթաւորքն . ոմն Ռ , ոմն ԲՌ , ոմն ԵՌ եւ  
 այլն զուռուշ . նաեւ ԺՌ տվողք կայր . իսկ այլ  
 աղքատք Ճ , Մ եւ այլն . եւ ժողովեալ բազում  
 գանձս , աւելի քան զպարտսն . զի եւ աղքատք 70  
 եւ մուրացիկք եւ կոյրք եւ կանայք եւս տային :

Եւ որոչեալ քսան այր խոհեմ եւ իմաս-  
 տուն՝ պատրաստեցան եւ աճապարեցին եւ  
 մտին ի Սուրբ յԵրուսաղէմ ընդ Ենկիխոճային :  
 Եւ գնացեալ ի բերթն՝ ծանուցին պարոնին 75  
 գելս իրացն , թէ Մեք կամիմք վճարել զպարտս  
 ամենայն : Եւ հրամայեաց պարոնն քարոզ  
 կարդալ ի մէջ քաղաքին , զի ամենայն փոխա-  
 տուքն գան առ պարոնն՝ բերելով զամենայն  
 գրաւսն ընդ ինքեանս . եւ վա՛յ այն մարդուն , 80  
 որ մինչ իրեք օրն ձայն չածէ կամ գրաւըն չի  
 բերէ , եւ չառնու զվճարքն . այնուհետեւ նորա  
 փոխ տված գրամն կորնչի : Եւ այսպէս բա-  
 զումք եւ յոլովք գային , բերէին . եւ նոքա  
 վճարէին սիճիլով , հուճաթով՝ առջեւ պարո- 85  
 նին եւ զատուն : Եւ յորժամ վճարեցին՝ դար-  
 ձեալ բողոք կարդացին . թէ ոք փոխ ետուր  
 կամ գրաւ ունի եւ ոչ գայ երեւի , յետոյ թէ՛

62 յառատաձեռնել : — 63 յոլով : — 66 կարողու-  
 րեան : — 71 մուրացիք :